Մեր շահերը

Վաշինգտոնում ճանաչվում, Բաքվում վտանգվում, Մոսկվայում պաշտպանվում են

ՎԱՀԱՆ ՍՈՒՐԵՆՅԱՆ

Վերջին հարյուրամյակում հայ ժողովուրդն առրեց երկու իրադարձություն՝ հայոց մեծ եղեռնը եւ անկախ պետականության վերականգնումը: Այսօր վերսին կերտում ենք մեր անկախությունը եւ ականատեսը լինում դարի առաջին ցեղասպանության միջազգայնորեն ճանաչմանը:

Այդ իմաստով ԱՄՆ-ի կոնգրեսի ենթահանձնաժողովում խնդրի ճանաչումը հատկանշական է երկու առումով՝ նախ, գործ ունենք աշխարհի, փաստորեն, ամենահզոր պետության հետ, եւ երկրորդ, նա Թուրքիայի ռազմավարական դաշնակիցն է: Իսկ Թուրքիայի ներկայիս կառավարողները միջոց չեն խնայում մերժելու ցեղասպանության իրողությունը, թերեւս հստակ գիտակցելով ճշմարտության իրենց համար ոչ նպաստավոր հետեւանքները: Այն ոչ միայն բարոյական (առայժմ) փոխհատուցում է հայերիս համար, այլեւ ապացույց, որ թուրքերը ջարդարարներ են, ուրիշի գոյության իրավունքները չընդունողներ: Եվ զուր են Անկարայի այսօրվա քարոզիչները գռեհկացնում հարցը, թե կոնգրեսում ցեղասպանության ճանաչումը կապված է քվեներ ունենալու հետ: Ամերիկայի Միացյալ Նահանգներն ինքը, լինելով մարդու իրավունքների պաշտպանության ջատագով, ի վերջո, չէր կարող անտեսել մի ողջ ժողովրդի սպանդի փաստը: Նա պարտավոր էր դատապարտել, եւ կարծում ենք, որ դատապարտող այդ փաստաթուղթը վերջնականապես կընդունվի: Դա վկայում է, որ իդեալները ոչ թե գրական հիշեցումներ են, այլ իրական բարոյաքաղաքական արժեքներ: Թուրքերն էլ են, ի վերջո, ընդունելու կատարված ոճիրը, որովհետեւ հնարավոր չէ մարդկության աչքի առջեւ գողունի ապրել: Գերմանացիները երկու անգամ ներողություն խնդրեցին հրեաներից (Բրանդտ եւ Ֆիշեր), եւ սարսափելի ոչինչ չպատահեց. միայն հաստատվեց այդ ազգի բարոյական կերպարը սահմանազատվեցին ֆաշիստներից: Ներկայիս թուրքերը դեռ ուժ չունեն իրենց առանձնացնելու Օսմանյան սուլթաններից ու երիտթուրքական ցեղասպաններից: Բայց քաղաքակրթված լինելը խոսքով չէ, այլ վարքով:

Եղածը լավագույն դաս է նաեւ մեր այն քաղաքական խմբակների համար, որոնք նույնպես ջանք չէին խնայում վնասակար ներկայացնելու ցեղասպանության ճանաչմանը հետամտելը միջազգային ասպարեզում: Ըստ նրանց, եղեռնի հիշատակումը խոչընդոտ կարող է լինել մեր ապագայի համար, եւ որ Թուրքիան չի լինի ագրեսիվ, եթե մենք համաձայնենք մոռանալ մեր մեծագույն ազգային աղետը: Պարզվեց, որ այո, ոմանք, հանուն իրենց շահերի կարող են եւ լռել, բայց չի լռում աշխարհը: Միջազգային ատյաններում գոնե պարզ գիտակցում են, որ եթե ցեղասպանությունը չդատապարտես, ապա ազատ կթողնես այն ձեռքերը, որոնք կարող են կրկնել ոճիրը: Գոնե այսքանից հետո պարզ պիտի լինի, որ ցեղասպանության ճանաչումից հրաժարվելը ոչ թե քաղաքական խոհեմության, այլ ազգային դավաճանության վկայություն է:

Իսկ եթե լավ նայենք մեր շուրջը, ապա կտեսնենք, թե որտեղ են իսկապես վտանգվում մեր ազգային շահերը: Եռօրյա այցով Բաքու ժամանեց Թուրքիայի պաշտպանության նախարարը, որն իր պաշտոնակցի հետ համաձայնագիր ստորագրեց «Պաշտպանական արդյունաբերության բնագավառում համագործակցության մասին»: Սա Ադրբեջանի հետ հարաբերություններում նոր որակ է: Նկատի ունենալով կողմերի ագրեսիվությունը՝ կարելի է ասել, որ լուրջ վտանգ է ստեղծվում ամբողջ տարածաշրջանի անվտանգության համար: Բաքվում չեն զլանում ամեն անգամ խոսել խաղաղության, Արցախի խնդիրը քաղաքական միջոցներով լուծելու պատրաստակամության մասին, բայց արի ու տես, որ մտքներում բոլորովին այլ բան է՝ ռազմական արդյունաբերության հետագա զարգացում: Իսկ դա նախեւառաջ ուղղված է լինելու մեր դեմ: Սա չհասկանալ՝ նշանակում է մանկամիտ լինել:

Ընդունենք վերջապես, որ Արցախը զիջելու դեպքում անգամ մեր նկատմամբ ռազմական թշնամանքը չի վերանա. դա նրանց արյան մեջ է: Հետեւաբար՝ թե ցեղասպանության, թե Արցախի հարցի շուրջ որեւէ զիջողականություն դրական փոխհատուցում չի տա. ագրեսիան եղել եւ մնում է թուրքի՝ մեր դեմ ուղղած վարքագիծը: Մենք նրանց զիջելու ոչինչ չունենք, բացի մեր լինելությունը մեր հողի վրա, ուստի իրենք անելիք ունեն ընդունել մեր գոյության ներկան:

Իհարկե, ընդունելու համար անհրաժեշտ է նաեւ մեր հուսալի պաշտպանվածությունը, ներքաղաքական կայունությունը, տնտեսական վերելքը:

Ավելի քան ուշագրավ են նախագահի պատասխանները «Իզվեստիա» օրաթերթին: Բայց առավել գոհացուցիչ է այն հաստատումը, որ «Հայաստանի եւ Ռուսաստանի ռազմական համագործակցությունն այսօր մեր հարաբերությունների ավելի ու ավելի դինամիկ զարգացող ոլորտն է»: Դա պատմության խորհուրդն է եւ ժամանակի հրամայականը: Բայց, չգիտես ինչու, որոշ հայտնի ուժեր այստեղ էլ են բողոքում, թե ինչու ենք սերտ կապեր հաստատել Ռուսաստանի հետ: Իսկ ի՞նչ է առաջարկվում՝ մեղայականով ներկայանալ թշնամուն ու հայցել նրա գթությո՞ւնը: Պատմական ոչ հեռու անցյալում դրա օրինակն էլ կա: Դաս չքաղողներին հիշեցնենք, որ երբ 1920 թվականին հայ բոլշեւիկները Բաքվում համաձայնում էին Հայաստանի վրա Թուրքիայի հարձակմանը, չէին կարող պատկերացնել, որ «կարմիր» թուրքերը ոչ թե կազատագրեն երկիրը դաշնակցականներից ու կնվիրեն իրենց, այլ կկործանեն եւ տարածքներ կզավթեն: Այնպես որ, հայ-ռուսական դաշինքի հետեւեողական ամրապնդումը մեր անվտանգության խարսխաքարն է: Կարծում ենք, որ ՀՀ նախագահի եւ կարեւորագույն ոլորտների վեց նախարարների ներկայիս այցելությունը Մոսկվա նոր հորիզոններ կբացի երկու երկրների հարաբերություններում: Այսինքն՝ կխորանան ոչ միայն ռազմաքաղաքական կապերը, այլեւ որակական թափ կառնի առեւտրատնտեսական կառույցների համատեղ գործունեությունը: Գրավականն այն է, որ ասվածը բխում է կողմերի կենսական անանց շահերից: Մենք մեր հոգեբանությամբ, մտածողությամբ, մշակույթով աշխարհի հետ ենք, բայց մեր գերխնդիրը մեծ աշխարհի մեր անկյունը պահպանելն է, առավել ապահով դարձնելը: